#69, 1999թ. սեպտեմբերի 25, շաբաթ անկախ օրաթերթ

Ազատություն

24 էջ

գինը՝ 100 դրամ

XXI ԴԱՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԱՐՈՅԱՆԸ ԿՐԿԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱՄՈՒԻ եւ հեռուստատեսության միջոցով հասարակությունն արդեն տեղյակ էր սեպտեմբերի 17-21-ը «Մոսկվա» կինոթատրոնում ամերիկահայ լուսանկարիչ Փոլ Գալինյանի նկարահանած «Վիլյամ Սարոյան. մարդը, գրողը» վավերագրական ֆիլմի ցուցադրման մասին: Դահլիճը լիքն էր եւ ֆիլմն ընդունվեց մեծ խանդավառությամբ: Աշխարհում ցուցադրված եւ միջազգային փառատոներում մրցանակներ շահած (այդ թվում՝ «Ոսկե մրցանակ») ֆիլմին ութ տարի հարկավոր եղավ դեպի հայրենիք ճանապարհ հարթելու համար:

Կինոնկարի դիտումից հետո Փոլ Գալինյանը Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանին նվիրեց Սարոյանի 10 մեծադիր լուսանկար:

Սա Սարոյանի չորրորդ այցն էր Հայաստան. առավել ամբողջական, քան հնարավոր է իրականում կիրառել: Իր Բիթլիսով, Ֆրեզնոյով ու էյչ փողոցով, անձնական իրերով, գրական արխիվով, իր ով լինելով ու ինչ արածով, իրական ու եթերային ունեցվածքով: Սեփական ճակատագիր. գրամեքենա, ճոճաձող, շոգեքարշ, ձեռքը թափահարող սեւամորթ, արաբ ու Արամ, 1908 եւ 1981, մարմինը՝ Ֆրեզնո, սիրտը՝ Հայաստան: Տոհմի պատմություն. քարոզիչ եւ բանաստեղծ Արմենակ Սարոյան, «ծննդաբերելիս Թագուհի Սարոյանը կանգնած էր», Կոզեթ, Զապել, Հենրի: Թուլությունը՝ թղթախաղ, խմածը թեյ, սիրո ամբողջությունը՝ մարդ: Հեծանիվով Ֆերզնոյում, հետո փարիզաբնակ: Հայ ու անգլիագիր. մարդկանց սեփականությունը, ոնց ծոցատետր, հեռախոսահամարների գրքույկ կամ հիշեցման քարտ... իսկ անձամբ ինձ համար՝ 5-րդ ավետարանիչ:

... Ֆիլմն ստեղծվել է հիմնականում լուսանկարներով, որոշ դրվագներում դերասանների խաղն է եւ իրական Սարոյանին պատկերած տարբեր տարիների տեսարաններ: Դերասանը, իսկ հաճախ էլ հենց Սարոյանի ձայնն է անգլերենով ներկայացնում իր եւ իր ընտանիքի պատմությունը, որն էլ ուղեկցվում է էկրանին ցուցադրվող լուսանկարներով, կենդանի դրվագներով: Ֆիլմը երկլեզու է. երբ անգլերենով է պատմում, նույն պահին տեքստը հայատառ ներկայացվում է էկրանին, իսկ երբ Սարոյանն ինքը խոսում է հայերեն, նույնն անգլերենով է գրվում էկրանին: Մեկ ժամից էլ պակաս տեւողության ֆիլմի հեղինակին միանշանակ հաջողվել է հնարավորին չափ ամբողջական ներկայացնել Սարոյան մարդուն եւ գրողին՝ իր հայտնիով ու անհայտով, պայծառատեսությամբ ու հիշատակներով: Այլ տեղ

եւ այլ կերպ հնարավոր չէ մեկ մատուցմամբ այդպես կատարյալ զգալ Սարոյանին:

Հեղինակը մանրամասն զննել է նյութը, մատուցել նրբորեն ու սիրով, խոր պատկառանքով: Հստակ երեւում է, որ Փոլ Գալինյանն իր ամեն մի նյարդով է ապրել Սարոյանին, ֆիլմին մոտեցել որպես իր մեծագույն ստեղծագործության եւ աստեղային ժամի: Դա անմիջապես էկրանից փոխանցվում է հանդիսատեսին, եւ նույն պահին էլ ճիշտ գնահատողը (հանդիսատեսը) արձագանքում է: Ակամա մտածում ես. Սարոյանն ինն է, բայց ամեն ինչ չէ, որ գիտեի նրա մասին, այդ խորությամբ դեռ չէի հասցրել զգալ նրան: Փորձում եմ ժամանակ շահել, որպեսզի ֆիլմի թողած անմիջական ազդեցությունն անցնի, տեսնեմ, թե մեկ-երկու օր հետո ինչ է մնում մաղի մեջ: Եվ ամեն վայրկյան աչքերիս առաջ էկրանն է. սա արդեն ազդեցություն չէ, այլ անընդհատ իրեն բացող արվեստի նստվածք տվող թուրմը: Հաջողության գրավականն այն է, որ Գալինյանն իր ազգի կատարյալ զավակներից մեկին իրական փաստերով եւ իրականության մեջ կերտել է անմնացորդ սիրով ու նվիրումով: Զվարթնոցի ավերակներով խոյակների ու զարդաքանդակ արծիվների ուղեկցությամբ, արեգակի շողերի մեջ եւ հենց արեւը բարձրացող Սարոյանի մտորումներն են. «Համարձակեցեք բնաջնջել այս սերունդը: Սեպեք թե դարձյալ 1915-ի համաշխարհային պատերազմ է, քանդեցեք Հայաստանը, տեսեք թե կրնա՞ք... դուք շան լակոտներ, համարձակեցեք բնաջնջել զիրենք»:

Բացառիկ տպավորիչ է ֆիլմի հատ-

կապես այն հատվածը, երբ Սարոյանն իր թավ ձայնով, բիթլիսցու բարբառով խոսում է Արամ Խաչատրյանի մասին:

Փոլ Գալինյանը Սարոյանի հետ մտերմացել է նրա կյանքի վերջին հինգ տարիներին: Մինչեւ ֆիլմի դիտումը, հենց դահլիճում, զրուցեցի ռեժիսորի հետ: «Մենք ընտանիքով ենք ֆիլմը նկարահանել, մեր միջոցներով եւ հարազատներից ու ընկերներից պարտք վերցնելով, որոնք մինչ օրս վերադարձված չեն: Մեծահարուստ շատ հայերի դիմեցի՝ հովանավորելու խնդրանքով, բայց պատասխանն էր՝ մեռած մարդու համար ինչու պիտի դրամ ծախսեմ... Բայց այս ֆիլմը դրամ վաստակելու կամ փառք շահելու համար չէ, որ նկարահանել ենք...»: Պատմեց մանրամասներ ֆիլմից, հիշողություններ Սարոյանից: Տեղեկացրեց, որ ֆիլմը տեսահոլովակներով տարածելու իրավունքը գնել են բացառապես հրեական ընկերությունները: Պայմանավորվածության համաձայն, հեղինակն իրավունք չունի ֆիլմը տրամադրել հեռուստաընկերություններին, այդ թվում՝ ՀՀ ազգային հեռուստատեսությանը, եւ հակառակ հեղինակի մեծ ցանկության՝ անգամ Ղարաբաղի հեռուստատեսությանը: Թե չէ ստիպված կլինի խոշոր չափի տուգանք վճարել:

«Թուրքիայի հրավերով ֆիլմը ցուցադրվել է նաեւ այնտեղ,- նշեց այրն Գալինյանը,- ցուցադրման ընթացքում կողքիս նստած Թուրքիայի հայոց պատրիարքը անընդհատ հարցնում էր. «Ե՞րբ է վերջանալու ֆիլմը, հո թուրքերի դեմ բան չկա՞»: Դիտումից հետո թուրք գյուղացիները մոտենում եւ ձեռքս էին համբուրում, ասելով. «Այդ ի՞նչ լավ ֆիլմ ես նկարել այդ մեծ մարդու մասին»:

Մարդկանց կողմից գծված սահմանները նույն մարդկանց համար, չեն վերաբերում Սարոյանին, ոչ էլ ստեղծված դավանանքները: Սարոյանն այն լույսն է, որն ամեն տեղ եւ ամեն ինչից ներս թափանցելու առաքելություն ունի: Հայ եւ անգլիագիր լինելը ընդամենը պատրվակներ են համաշխարհային քաղաքացի կամ մարդկության սեփականությունը լինելու համար: Նորօրյա ավետարանիչն է, որի քարոզն ընդունելի է բոլոր հոգեւոր շինություններում: «Գուրգուրա՛ մարդկության ամենաչնչին նշույլին իսկ, քանի որ այդ է, որ կդիմադրե մահվան, հակառակ անոր որ անցավոր է»:

Ֆելիքս ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՔԻ ԻՍՏԻՍԼԵՈ



Թարգյանի միակ հերոսը կինն է ու այն զգացմունքը, որ հեղեղել է նրա նեսառությունը. եւ այն